ՆՈՐԱՏՈՒՍԸ ՄՇՏԱՊԵՍ ԲՆԱԿԵՑՎԱԾ ՀՆԱԳՈՒՅՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

ՄԿՐՏՉՅԱՆ ԼԱԼԱ
Գավառի պետական համալսարանի դասախոս

Նորատուսը գյուղ է Գեղարքունիքի մարզում, որն ունի հնագույն պատմություն: Այն հայոց աշխարհում վաղ շրջանի մարդկային հանգրվաններից մեկն է:

Պատմագիտության մեջ իշխում է այն տեսակետը, որ Նորատուսը հիմնադրվել է 1829 թ.-ին Արևմտյան Հայաստանից գաղթածների կողմից և որ Շահ Աբասի բռնագաղթից հետո Նորատուսը Հայաստանի բազմաթիվ բնակավայրերի նման ամբողջովին ամայացել է: Սակայն կան բազմաթիվ փաստեր, որոնք վկայում են, որ բռնագաղթից հետո էլ Նորատուսում կյանքը շարունակվել է: Մեր ուսումնասիրած որոշ պատմագիտական և ազգագրական աղբյուրների համաձայն, որոնցում նշվում է Գավառն իր հարակից գյուղերով, Նորատուսը՝ որպես գյուղ, հիշատակվում է 17-18-րդ դարերից:

Գեղարքունիքում մեզոլիթի շրջանում մարդու բնակության վերաբերյալ վկայություններ չկան, սակայն երկրաբանական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեզոլիթի ժամանակ Գեղարքունիքը ծածկված է եղել խիտ անտառներով, որտեղ շատ են հանդիպել ազնիվ եղջերուն, այծյամը, ցուլը, վարազը, գորշ արջը, կուղբը, վայրի էշը, վայրի ձին:

Ամենուր եղել են առատաբուխ աղբյուրներ:

Փոքր Սևանը տարվա մեծ մասը ծածկված է եղել սառույցով: Մեծ Սևանի տեղում եղել են բազմաթիվ լճեր ու ճահիճներ, որոնք շրջափակված են եղել եղեգնուտներով:

12000 տարի առաջ վերացել են վյուրմյան սառցադաշտերը: Հայաստանի տարածքում ձևավորվել է ներկայիս ռելիեֆը: Իշխող է եղել խոնավ, անտառային կլիման: Տաք գոտիներում ձևավորվել են տոհմական համայնքներ: Մարդիկ տիրապետել են կրակ ստանալու, նետ ու աղեղ գործածելու արվեստին:

Նոր քարի դարի՝ նեոլիթի վերին շրջանում Գեղարքունիքում հաստատվում է մարդը: Դա մոտավորապես Ք. ա. 6000-4000 թվականներն էր:

Լինելով լեռնային՝ Գեղարքունիքը հարուստ էր և՛ անտառներով, որտեղ մարդը կարող էր պատսպարվել և սնունդ հայթայթել, և՛ լեռնային քարայրներով, որոնք հնագույն մարդու համար լավագույն կացարան կարող էին հանդիսանալ:

Նեոլիթի շրջանում մարդիկ սովորեցին մեծացնել քարայրը, փորում էին արհեստական քարայրներ: Ավելի ուշ սկսեցին կառուցել երկարավուն քարե կացարաններ, պատերը՝ անտաշ քարերով, առանց շաղախի: Սրանք նախնական կիկլոպյան ամրոցներն են, որոնց նմանները հայտնաբերվել են նաև Սևանի ավազանում:

Նոր քարի դարի կայաններից մեկն էր Նորատուսը:

Նորատուսի հարավային կողմում՝ «Թորոյի պալեր» կոչվող քարափների հարավային մասում, մինչև այսօր էլ պահպանվում է մի մեծ քարայր, որին տեղացիները անվանում են Հեր:

Քարանձավի շուրջը պահպանված անշաղախ կիլկոպյան շարերի մնացորդները նոր քարի դարի մշտաբնակության վկայությունն են: Միայն էնեոլիթի ստորին շրջանում երևացին առաջին ուղղաձիգ պատերը, որին հաջորդեցին կիկլոպյան բերդ-շենները[1]:

Ըստ ազգագրագետ Գեդեոն Միքայելյանի, որն ուսումնասիրել է Հեր կիկլոպյան բերդ-շենը, Նորատուս գյուղից 2 կմ դեպի արևելք՝ Սևանա լճի ափամերձ հարթության վրա, առկա է կոնաձև լանջերով, մեծ թեքության մի բարձունք, որի լանջերը ծածկված են հրաբխային խարամով: Այն շրջապատի հարթությունից բարձր է շուրջ 120 մ: Տեղացիները լեռը Հերի դար են կոչում, որովհետև բարձունքի հարավ-արևելյան լանջին կան երկու բավական ընդարձակ քարայրներ, որոնք, ինչպես ցույց է տվել ուսումնասիրությունը, հավանաբար եղել են նախնադարյան մարդու կացարաններ:

Լեռան գագաթը ձագարաձև է, և բարձունքի բոլորակ եզրերով անցնում են կիկլոպյան ամրոցի պարիսպների մնացորդները՝ կրկնելով տեղի շրջանաձևությունը:

Հերի դար ամրոցը հավանաբար տարածաշրջանի պաշտպանության գործում մեծ դեր է ունեցել: Կանգնած լինելով բարձր սարի վրա՝ ունեցել է մեծ տեսադաշտ, որտեղից պարզ երևում են Գավառագետի հովտի ու նրա շրջապատի համարյա բոլոր կիկլոպյան ամրոցները[2]:

Նորատուսի Շորգյոլ կոչված վայրի դամբարաններում հայտնաբերվել են միկարասանի, երկկարասանի և խմբակային թաղումներ:

1906-1908 թթ.՝ Երվանդ Լալայանի կողմից կատարված պեղումների ժամանակ, հայտնաբերվել են գիտական մեծ արժեք ներկայացնող մետաղյա գործիքներ ու զենքեր:

Այս ամենը վկայում է, որ վաղ քարե դարից սկսած՝ բնակությունը Նորատուսում անընդհատ շարունակվել է:

---

[1] Տե՛ս Նորատուս (Նորատուս գյուղի պատմությունը), Երևան, «Զանգակ 97», 2000:

[2] Տե՛ս Միքայելյան Գ., Կիկլոպյան ամրոցներ, Երևան, 1968:

Հայագիտության մեջ կա տեսակետ, ըստ որի՝ Հայասա երկրից Հայկի սերունդներից Գեղամը տիրում է Սևանի ավազանի տարածքներին և իր անունով կոչում վայրերը, լիճը և լեռները:

Ըստ ավանդության՝ Գեղամ նահապետը Հերի բնակատեղիից ոչ հեռու՝ Գավառագետի ափին՝ գեղատեսիլ վայրում, կառուցում է բնակավայր և կոչում Նորատունս:

Նախաուրարտական հայկական քաղաքակրթության բազմաթիվ վկայություններ հաստատում են, որ Նորատուսում, Հերի դար վայրից սկսած, բնակությունն անընդմեջ շարունակվել է:

Ուրարտական ժամանակաշրջանում Հայոց աշխարհի գավառներում ծագած խռովություններից անմասն չի մնում նաև Նորատուսը:

Սարդուրի 2-րդը (Ք.ա. 764-735թթ.) նվաճում է Վելիքուխի երկիրը, որի կազմի մեջ էր նաև Նորատուսը, դաժանորեն պատժում ցեղային առաջնորդներին, ոչնչացնում կամ գերեվարում մեծ թվով տեղաբնիկների:

Սարդուրի 2-րդի թողած արձանագրության մեջ հիշատակվում են Վելիքուխի երկրի 22 բերդ-ամրոցներ, որոնցից մեկը Հերի բերդն է:

Ռուսա 1-ինը Ք.ա. 728 թ. կառուցողական մեծ աշխատանքներ է ծավալել, վերակառուցել է նաև Հերի բերդ-ամրոցը:

Ուրարտուի անկումից հետո Գեղարքունիքն ընդգրկվում է Երվանդունիների հայկական թագավորության կազմում: Արտաշեսյան հարստության շրջանում Նորատուսը եղել է շեն բնակավայր:

Միջնադարում Նորատուսը, Գեղարքունյաց աշխարհի հետ միասին, ենթարկվում է տարբեր ցեղերի արշավանքներին ու հալածանքներին:

Նորատուսի դերն ու համբավը շեշտակիորեն բարձրանում է 9-րդ դարի կեսերից Բագրատունիների կողմից հայոց պետականությունը վերականգնելու շնորհիվ: Նորատուսի տնտեսական, քաղաքական, հոգևոր-մշակութային կյանքն իր բարձրակետին է հասնում Վասակի և Մարիամի որդի Սահակ իշխանի օրոք, որը այն դարձնում է իր պաշտոնական նստավայրը: Սահակը 9-րդ դարի վերջում մայրաքաղաք Նորատուսում կառուցում է Սբ. Աստվածածին եկեղեցին և այն դարձնում եպիսկոպոսանիստ: Այնուհետև 8 դար շարունակ Նորատուսը հանդիսացել է Գեղարքունյաց գավառի վարչական, առևտրական, տնտեսական, մշակութային և հոգևոր կենտրոնը:

Սահակ իշխանն ամենայն հավանականությամբ մահացել է 910-ական թվականների կեսերին և համաձայն Ստ. Օրբելյանի վկայության՝ թաղվել Նորատուսում[1]:

---

[1] Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Փարիզ, 1859, էջ 225:

Նորատուսի բարգավաճ վիճակի հաջորդ էտապը Զաքարյանների ժամանակաշրջանն էր:

Զաքարյանների տիրապետության շրջանում Ծմակ գավառը (այժմյան Գավառի տարածաշրջանը) Իվանե Զաքարյանը պահում էր իր ձեռքում: Կառավարիչը նստում էր Նորատուսում:

Գյուղի հյուսիսային եզրին գտնվող «Հազախաչի» արձանագրության համաձայն՝ Աթաբեկ Իվանեի և իր եղբորորդի շահնշահ Ավագի իշխանության ժամանակ ջրանցք է փորվել, և Գավառագետից ջուրը տարել են դաշտերի ոռոգման և անասուններին ջրելու համար:

Թաթար-մոնղոլների ավերիչ արշավանքների ընթացքում բնակիչների մի մասը թողել էր իր տները և պատսպարվել քարանձավներում: Իսկ մնացածը հրի ու սրի է մատնվել: Լենկ-Թեմուրի հրոսակախմբերի՝ Հայաստան ներխուժումից Նորատուսն այնքան էլ չի տուժել, քանի որ ըստ ավանդազրույցի՝ խաչքարերը փրկել են գյուղը:

Հայաստան աշխարհի, Գեղարքունիքի, ինչպես նաև Նորատուսի համար անդառնալի հետևանքներ են ունենում Շահ Աբբասի կազմակերպած բռնագաղթերը: Ամայանում են բազմաթիվ գավառներ, ավերվում հազարավոր շեներ: Բնակչությունը հրով ու սրով քշվում է դեպի Պարսկաստան:

Այնուհետև սկսում են աշխուժանալ բազմաթիվ քոչվոր ցեղեր, որոնք զանգվածաբար փոխում են տեղանունները:

Սակայն Նորատուսում կյանքը կանգ չի առնում:

16-րդ դարի վերջերից սկսվում է մելիքական շրջանը: Այն՝ իբրև պետական-վարչական համակարգ, ավելի է ամրապնդվում 1639թ. հետո: Այնուհետև գյուղը կառավարում են տանուտերերն ու քյոխվաները: Նրանցից հայտնի են տանուտեր Հակոբը, որի խաչքարը 1653թ. կերտել է Հովհաննես Կազմողը[1], տանուտեր Բիրապը (1669)[2], Սարգիս քյոխվան(1744)[3] և բազմաթիվ այլ տանուտերեր ու քյոխվաներ:

Այսպիսով, սկզբնաղբյուրներից երևում է, որ Նորատուս գյուղաքաղաքում Շահ Աբասից հետո էլ կյանքը շարունակվել է: Համենայն դեպս, այդ են վկայում 1750 թ. վիմագիր արձանագրությունները և Սիմեոն Երևանցու «Ջամբռ» աշխատության մեջ պահպանված 1765 թ. այն հաղորդումը, ըստ որի՝ գյուղը դասվում է Հայրավանքի վիճակում:

Արդյո՞ք երբևէ ամայացել է Նորատուսը, հայաթափվե՞լ է այն, այստեղ բնակվե՞լ են օտարազգիներ: Հարկավ, ո՛չ:

---

[1] Դիվան հայ վիմագրության, կազմող՝ Բարխուդարյան Ս. Գ., պր. IV, էջ 15, N 9:

[2] Դիվան հայ վիմագրության, կազմող՝ Բարխուդարյան Ս. Գ., պր. IV, էջ 38, N 122:

[3] Դիվան հայ վիմագրության, կազմող՝ Բարխուդարյան Ս. Գ., պր. IV, էջ 39, N 124:

Լեզգիների ծովափնյա վերջին ջարդարարություններից հետո, որը տեղի է ունեցել 1751-1787 թթ, Նորատուսը գրեթե ամայացել է: Սակայն արդյո՞ք վերջնականապես ամայացել է գյուղը: Այս մասին բացակայում են գրավոր հիշատակությունները: Կարելի էր տեղեկություններ քաղել խաչքարերից, սակայն դրանց վրայի արձանագրությունները մաշված են, աղավաղված, ինչպես նաև ներգաղթյալ ալաշկերտցիները տեղահանել են թեթև գերեզմանաքարերը և դրանք դրել իրենց ննջեցյալների վրա՝ տակնուվրա անելով հանգստարանի շարքերը:

Այնուամենայնիվ, կան հանգամանքներ, որոնք վկայում են, որ գյուղն իսպառ ամայացած չի եղել:

Առաջին. 1750 թ.-ին գյուղի տանուտեր է հիշատակվում Սարգիսը, ուրեմն այդ ժամանակ գյուղն ուներ ստվար բնակչություն: Բացի դրանից՝ Սիմեոն Երևանցու «Ջամբռ» աշխատության մեջ, ինչպես նշեցինք, 1765 թ.-ին հիշատակվում է Նորատուս գյուղը:

Երկրորդ. Հովհաննես Շահխաթունյանցը Սբ. Աստվածածին եկեղեցու պատմությունը շարադրելիս մանրամասնում է, թե լեզգի հրոսակներից պաշտպանվելու նպատակով բնակչությունը պատսպարվում է եկեղեցում: Հրոսակները պաշարում են եկեղեցին և ժողովրդին կրակի մատնում: Նորաբնակների կողմից տաճարը մաքրելու ժամանակ հայտնաբերվում են մեծաքանակ մարդկային այրված դիակներ և զարդեր[1]:

Թե երբ է տեղի ունեցել այդ աղետը, հայտնի չէ: Ըստ Շահխաթունյանցի՝ դեպքի մասին պատմվում է ավանդաբար: Եթե նորաբնակների առաջին խմբերը Նորատուս են եկել 1829 թ.-ին, ապա ներգաղթից 10 տարի անց դեպքի մասին վիճակագիրներին ովքե՞ր են պատմել, իհարկե, ոչ եկվորները: Հետևաբար այդ դառը հիշողությունները պահել են նահատակների հետնորդները՝ հին նորատուսցիները: Սա ևս փաստում է այն մասին, որ Նորատուսն ամբողջովին չի ամայացել[2,3]:

Այսպիսով, բերված տեղեկությունները վկայում են, որ Նորատուսը բնակեցված է եղել նոր քարե դարից մինչև այժմ: Նորատուսը երբեք ամբողջովին ամայացված չի եղել, ինչպես նշում են որոշ հեղինակներ: Ավերիչ ներխուժումների ժամանակ հնարավոր է, որ նորատուսցիները քաշվել են լեռները, այնուհետև եկել և կրկին շենացրել են իրենց հայրենի եզերքը: Այս փաստերը դեռևս ավելի խորը ուսումնասիրվելու և ճշգրտվելու կարիք ունեն:

---

[1] Շահխաթունեանց Յովհ., Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, էջ 238:

[2] Ըստ հնագետ Սուրեն Սաղումյանի:

[3] Նորատուս (Նորատուս գյուղի պատմությունը), Երևան, Զանգակ 97, 2000թ.

Բանալի բառեր՝ *Նորատուս, Վելիքուխի, նեոլիթ, Հերի դար, կիկլոպյան ամրոց, Շահ Աբասի բռնագաղթ, խաչքարեր, սբ. Աստվածածին եկեղեցի, լեզգիներ:*

Օգտագործված գրականություն

1. Միքայելյան Գ., Կիկլոպյան ամրոցներ, Երևան, 1968:
2. Շահխաթունյանց Հովհ., Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Այրարատոյ:
3. Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Փարիզ, 1859:
4. Դիվան հայ վիմագրության, կազմող՝ Բարխուդարյան Ս. Գ., պրակ IV, Գեղարքունիք. Կամոյի, Վարդենիսի և Մարտունու շրջաններ, Երևան, 1973:
5. Նորատուս (Նորատուս գյուղի պատմությունը), Երևան, «Զանգակ 97», 2000:

NORATUS AS AN OLD SETTLEMENT, WHICH HAS CONSTANTLY BEEN INHABITED

MKRTCHYAN LALA
Lecturer of Gavar State University

Noratus is one of the oldest places in Armenia in Gegharkunik Province, which has been inhabited since the new Stone Age and has never been completely devastated. During the ruinous invasions, it is possible that the inhabitants of Noratus retreated to the mountains. However, they returned and rebuilt their homeland in Noratus again and continue to live there till now. Meanwhile, these facts need to be additionally studied and refined.

Key words: *Noratus, Velikukhi,* new Stone Age*, Century of Hera, Cyclopean Fortress, deportation by Shah Abas, crosstones, St. Holy Mother Church, lezgins.*

НОРАТУС КАК ДРЕВНЕЕ ПОСЕЛЕНИЕ, КОТОРОЕ НИКОГДА НЕ БЫЛО ОПУСТОШЕННЫМ

МКРТЧЯН ЛАЛА
Преподаватель Гаварского государственного университета

Норатус - одно из древнейших мест Армении, деревня в марзе Гегаркуник, заселенная еще с нового каменного века. Норатус никогда не был полностью опустошенным. Во время разрушительных вторжений, возможно, что норатусцы временно покидали свое местожительство и скрывались в горах, затем они снова

возвращались в родные места, продолжали и продолжают жить там до сих пор. Но эти факты необходимо дополнительно изучить и скорректировать.

Ключевые слова: *Норатус, Великухи, неолит, циклопическая крепость, насильственное переселение шаха Абасса, хачкары, церковь св. Богородицы, лезгины.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 15.03.2019թ.:
Հոդվածը գրախոսվել է 19.04.2019թ.: